

կատկածելի մկրտութիւնը, բայց sub conditione (պայմանաւորեալ), եթէ դու մկրտուած չես, մկրտում եմ քեզ և այլն: Յաւիտենական փրկութեան համար անպայման անհրաժեշտութիւնը ստիպում է կաթոլիկ եկեղեցուն կրկնել այսպիսի պայմանական մկրտութիւնն:

Ուրիշ կաթոլիկներ բերում են աւելի նուազ փաստեր: Ասում են որ բողոքական պատօրները փոխանակ գլխին ջուր ածելու, միայն սրսկում են երեսին ևն:

Նոյեմբերի 9-ին Պիոս X. հրաւիրեց իւր կոնսիստորիային առաջի փակ ժողովի: Կարդինալներին ուղղած ճառի մէջ նա արտայայտեց կարճ կերպով իւր հայեացքը իւր պաշտօնավարութեան վերաբերութեամբ: «Եկեղեցու շահերի համար, ասաց նա, անհրաժեշտ է, որ եպիսկոպոսը կարգուի իւր եկեղեցու իշխանութիւնից: Եթէ այդ գոյութիւն չունի, մենք պէտք է լանք այդ հանգամանքը: Իբրև ամենամեծ անարդարութիւն դէպի եկեղեցին»: Նորա կարծիքով, պապը հաւատք քաղաքականութիւնից չպիտի բաժանէ, բայց իբրև աշխարհի մէջ ամենակատարեալ հասարակութեան կառավարիչ, նա պէտք է պահպանէ խաղաղ յարաբերութիւն աշխարհի բոլոր տէրութիւններին հետ: Ճառից յետոյ պապը կարդինալութեան աստիճան տուեց ստատոս սեկրետարի կուրիայի Մերրի—Գրեյ—Վալուէն և Պադուայի արքեպիսկոպոս Կալլիգուէլուն: Երեք օրից յետոյ տեղի ունեցաւ կոնսիստորիայի փառաւոր ընդհանուր ժողով և նշանակուած նոր կարդինալները՝ օժումն ընդունեցին:

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Սեպտեմբերի վերջերը Բրաունշվէյգում կաղմակերպուած ներքին միսիօնարների ժողովը շոշափեց եկեղեցւոյ ընդհանուր կեանքին վերաբերեալ շատ հետաքրքիր հարցեր: Պրօֆ. Մայերը (Ստրասբուրգից) կարգաց մի ղեկուցումն, շոշափելով «ներքին միսիօնարների վերաբերեալ խնդիրները, աչքի առաջ ունենալով այն վտանգը, որ նեւը շարժուել է և սպառնում է քրիստոնէական աշխարհայեցողութեանը: Զեկուցողը այդ երևոյթները պատճառը վերադրում է ոչ միայն ներկայիս նեղ—գործնական ուղղութեանը, որի հետ դժուար է կռուել, այլ և տիրող

տեղական գիտութիւններին (դրական նիւթապաշտութեան և նկղչէականութեան), որոնց հետ կառուել կարելի է և պէտք է: Ներքին միասնարարութեան պարտքն է հրատարակել զբքեր և կազմակերպել դաստիարակութիւններ այդ աշխարհահայեցողութիւնները հերքելու համար: Եւ որովհետեւ վերջիններին ագգեցութեան գաղտնիքը գիտականի մէջ է, ուստի և քննադատութիւնը պիտի լինի խիտ գիտական. «որքան էլ քննադատութիւնը ժողովրդական լինի, պէտք է նա խիտ գիտական բնաւորութիւն կրէ»: Զեկուցանողի կարծիքով, այս ձևով կարելի է «հեռացնել հեռի շարժման գլխաւոր փորձարարերը և դիւրացնել բրիտանիական քարոզի մուտքը սրտերի մէջ»: Ժողովը վճռեց. «ներքին միասնարարական ժողովը յայտնում է, որ նորա ամենամեծ նպատակը պէտք է լինի կառուել սուտ բրիտանական հոսանքի դէմ: Նա յոյս ունի, որ ներքին միասնարարական ընկերութիւնները, ինչպէս և բոլոր աւետարանական բրիտանականները, կը մատնակցեն այդ կառուին, և խնդրում է կենդանական յանձնաժողովին իրագործել ղեկուցագրի առաջարկած կառուի միջոցները»:

Գերմանիայում նոր աստուածաբանութեան դէմ մղուած կռուի մէջ հակառակ կողմը չի կարող իւր ունեցած յաջողութիւնով պարծենալ: Բոլոր փորձերը՝ սահմանափակել ազատամիտ պրոֆեսորների մուտքը և օրաշտօն ստանալը աստուածաբանական ֆակուլտետներում, մինչև այսօր անհետևանք մնացին: Նոյնպէս անյաջող անցաւ այս օրերս սրբաւորական եկեղեցու ընդհանուր սինօդում կատարած փորձը: Առանձին յանձնաժողովը աստուածաբանական ամբիոնները նոր պրոֆեսորներով փոխանակելու հարցի առթիւ սինօդին ներկայացրել է կարգադրութեան մի առանձին ծրագիր, որի մէջ խնդրում է օգնել իրեն, որպէս զի՝ ազատամիտ պրոֆեսորներին, որոնք Ս. Դիրքը իբրեւ եկեղեցւոյ հիմք չեն ընդունում, աստուածաբանական ֆակուլտետներում պաշտօն չտրուի:

Այս առաջարկութիւնը արդէն յանձնաժողովում ընդհանուրի հաւանութիւնը չէր գտել: Սինօդի ժողովում նա բոլորովին ընդդիմադրութեան հանդիպեց և տար վիճաբանութիւնից յետոյ բոլորովին մերժուեց: Սինօդը համաձայնուեց քուէարկել միայն այն առաջարկը, որ նորա ներկայացուցիչները աստուածաբանական ամբիոնների կանդիդատներին հաստատութեան խնդրում մասնակցութիւն ունենան և այդ էլ ընդունուեց ոչ միաձայն:

Անգամներ ի երեք մասը ֆակուլտետներ ըստարձակ ազատութեան պաշտպան էին և այդ պատճառով առաջարկած ծրագիրը ջնջուեց յանուն գիտութեան ազատութեան: Այս խնդրումը մեծ դեր կատարեցին արքունի քարոզիչ Դերիանդեր, պրոֆ. Կաուչ, Կաֆտան, Լօօֆս և ուրիշները:—Նոր աստուածաբանութեան յառաջադիմութիւնը, որն ի միջի այլոց իրեն նպատակ էր դրել օրթոդոքսութեան չոր ու ցամաք ձևերը կենդանացնել, այնուամենայնիւ չըկարողացաւ երկդասարդութեան մէջ առանձին յաջողութիւն ձեռք բերել: Վիճակագրութիւնը ցոյց է տալիս աստուածաբանական ֆակուլտետների ունկընդիւնների քանակութեան անկումը: 1903 թ. ամառուայ կիսամեակում գերմանական բոլոր 17 համալսարաններում դրուել են 2207 աստուածաբանութեան ունկընդիւններ, որոնցից 1199 պրուսական ինն համալսարաններում և 1108 մնացած համալսարաններում: 12 տարի առաջ, 1892 թ. միմիայն պրուսական աստուածաբանական ֆակուլտետները ունէին 2224 ունկընդիւններ: Յետոյ այս թիւը 12 տարուայ ընթացքում իջել է 540/0:

Ինչպէս հաղորդում է «Rappel»-ը Հաբէշտանի թագաւոր Նեգուս Մեննիլիքը նորերս մի հրովարտակ է հրատարակել, որով արգելում է սարուկների առևտուրը. առաջ ենք բերում հրովարտակի բովանդակութիւնը նայնութեամբ: «Սարուկների առևտրով զբաղուողների դէմ: Ստրանից մի քանի ժամանակ առաջ ես արգիւնցի իմ բոլոր նահանգներում Դալ ցեղի պատկանող մարդկանց առևտուրը, եկեղեցու մասնակցութիւնից հրաժարեցնելու սպանալիքով, սակայն դուք չկամեցաք ձեռք վերցնել այդ առևտրից:

Լսւո իմացէք, որ այսուհետեւ Դալ ցեղի մարդկանց առևտուրով զբաղուողները ոչ թէ տուգանք պէտք է վճարեն, այլ մարմնական պատիժ պէտք է կրեն (այոնինքն ձեռքը կամ ոտը պէտք է կտրուի):»:

